Արձանագրություն N 3

«ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/21» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

25.01.2018 թ.
ժ. 10:00

Մասնակցում են

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Ալավերդյան
Հանձնաժողովի անդամներ՝) Ա. Բաբայան (ԲԱ), Վ. Դեմիրչյան (ԳԱ)
Ս. Շահբազյան (ԲԱ), Ա. Գասպարյան (ԳԱ
Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Հուրոյան

I. <u>ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման մասին</u>

(Ա. Ալավերդյան)

1. Ընդունել ի գիտություն որ.

1.1 Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի/այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն սահմանված ժամկետում ներկայացրել է եզրակացություն, համաձայն որի «ՄԱԴՈՅԱՆ» ՍՊԸ -ն հայտը ներկայացվելու օրվա դրությամբ ունի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ 35849.0 ՀՀ դրամի չափով:

1.2 Վերոգրյալով պայմանավորված՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ ենթակետի և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 44-րդ կետի համաձայն, հանձնաժողովը որոշեց մերժել «ՄԱԴՈՅԱՆ» ՍՊԸ -ի հայտը

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ՝ 0:

2. << ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/21>> ծածկագրով գնման ընթացակարգի առաջին և հաջորդաբար տեղերն զբաղեցրած մասնակիցներին մասին

(Ա. Ալավերդյան)

2.1 Բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով՝

-- 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել «Ներսես և Ընկերներ» ՍՊԸ -ն:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ՝ 0:

2.2 Հանձնաժողովի քարտուղարին՝

Հիմք ընդունելով <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ հարցում ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ՝ 0:

3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման մասին

(Ա. Ալավերդյան)

3.1 1-ին տեղ զբաղեցրած Մասնակցի որակավորումը հավաստող փաստաթղթերը գնահատելու նպատակով՝ Գնահատող հանձնաժողովի նիստը հրավիրել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից հարցման պատասխանը ստանալու և 1-ին տեղ զբաղեցրած Մասնակցի կողմից որակավորման փաստաթղթերը ներկայացնելու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ժամը 10:00-ին, Երևանի քաղաքապետարանի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Արգիշտիի փողոց 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի		
Նախագահ՝		Ա. Ալավերդյան
Անդամներ՝		Ա. Բաբայան
		Վ. Դեմիրչյան
		Ս. Շահբազյան
		Ա. Գասպարյան
Քարտուղար՝		Գ. Հուրոյան